ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ

ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 9

10 հունիսի 2021 թվականի

Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2021 թվականի առաջին եռամսյակի հաշվետվության նախագծին հավանություն տալու մասին:

Հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի 5-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհուրդը որոշեց.

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2021 թվականի առաջին եռամսյակի հաշվետվության նախագծին՝ հաշվի առնելով Խորհրդի անդամների առաջարկությունները:
2. Գ.Ավետիսյանին՝ հաջորդ հաշվետվություններում ներառել հետևյալ տեղեկատվությունը՝
   1) սննդային գործոնով պայմանավորված թունավորումների վերաբերյալ.
   2) նախորդ եռամսյակում նշանակված, սակայն հաշվետու ժամանակահատվածում գանձված տուգանքների վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ. ՔԵՐՈԲՅԱՆ